ԱՂՎԱՆՔԸ ԵՎ ՄԻՀՐԱՆՅԱՆ ՏՈՀՄԸ

ՀՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ

VI դ. Աղվանից մարզպանությունը, որն ընդգրկում էր «Աշխարհացույցի» «բուն աշխարհն Աղուանից» երկիրը, Հայաստանից անջատված Արցախ և Ուտիք նահանգները, Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Խորվան, Շիրվան, Բաղկան, Ղեկաց և Թավասպարաց ազգագավառները[1], ավատատիրական հասարակարգի համար անխուսափելի տնտեսական մասնատվածության հետևանքով ապրում էր քաղաքական բաժանվածության մի շրջան, երբ առանձին իշխանությունների մեջ ժամանակ առ ժամանակ գլուխ էր բարձրացնում այս կամ այն իշխանական տունը և հաստատում իր տիրապետությունը։ Այս բանին մեծ չափով նպաստում էին նաև ստեղծված քաղաքական պայմաններն ու Պարսկաստանի գործունեությունը։

Անդրկովկասում ամրապնդվելու Պարսկաստանի ձգտումները, ուսումնասիրվող շրջանում, խաչաձևվում էին պատմության ասպարեզ դուրս եկած խազարների արշավանքների հետ, որոնք մշտապես լարված ու անկայուն քաղաքական վիճակ էին ստեղծում Սասանյանների համար ու դրդում նրանց՝ լրջորեն զբաղվելու իրենց հյուսիսային սահմանների պաշտպանությամբ։ Խազարների վայրագ ասպատակություններից երկիրը պաշտպանելու գործում, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, բացառիկ նշանակություն էր ստանում Աղվանից մարզպանությունը, որի վրայով էին անցնում խազարների՝ դեպի Պարսկաստանի խորքերը տանող արշավուղիները։ Եվ Պարսկաստանին ենթակա հենց այս երկրում էլ Սասանյանները պաշտպանական բնույթի լայն գործունեություն են ծավալում, որի մասին վկայում են արաբ մատենագիրները։ «Խոսրովները,— գրում է, օրինակ, Ալ-Իսթախրին,— մեծ հոգատարություն էին ցուցաբերում այդ սահմանային վայրերի նկատմամբ և չթուլացրին նրա դիրքի հսկողությունը, այս կողմից մեծ վտանգի ու ուժեղ վախի հետևանքով»[2]։

Ալ-Իսթախրու և մյուս արաբ մատենագիրների հաղորդումների համաձայն Աղվանից մարզպանության տարածքում «Խոսրովների» անցկացրած պաշտպանական միջոցառումներն արտահայտվում էին զանազան ամրությունների կառուցմամբ, տեղական իշխանական տներին արտոնություններ ու բարձր տիտղոսներ շնորհելով, ամրացվող վայրերում ժողովուրդների բնակե-

---

1 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 34, Հ. Ս. Սվազյան, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 210—218)։

2 Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербенджане («Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 29, Тифлис, 1901, с. 13).

ցումով և այլ ձեռնարկումներով։ Այսպես, արաբ մատենագիր Բալաձորին հայտնում է, որ խազարների ներխուժումները Կավատ I պարսից թագավորին (488—531) հարկադրում են նրանց դեմ ուղարկելու իր զորավարին։ Վերջինիս կողմից Արաքս և Շիրվան գետերի միջև ընկած տարածությունները նվաճվելուց հետո Կավատ I-ը «Առանում կառուցում է Բայլական քաղաքը, Բերդա քաղաքը՝ ամբողջ երկրի (գլխավոր) քաղաքը և Կաբալա, որն է խազար քաղաքը»[3]։ Կրկնելով Բալաձորիին, Իբն ալ-ֆակիհ ալ-Համադանին ու Իբն Խորդադբեհն ավելացնում են, որ Կավատը կառուցել է նաև աղյուսե մեծ պարիսպ[4]։ Այնուհետև նույն պատմիչները խոսում են Կավատի որդու և հաջորդի՝ Խոսրով I Անուշիրվանի (531—578) շինարարական գործունեության մասին. որ նա ծավալել է Կասպից ծովի արևմտյան ափերով դեպի հյուսիս կատարած իր նվաճումներին զուգընթաց[5]։ Վերջինս, սակայն, չի բավարարվել սոսկ պաշտպանական բնույթի շինարարական աշխատանքներով, այլ իր նվաճած տարածություններում ամրապնդվելու և դրանք կառավարելու համար ընտրել է տեղական իշխանների ու նրանց շնորհելով թագավորական տիտղոսներ, կանգնեցրել է իշխանության գլուխ։ «Ընտրում էր Անուշիրվանը թագավորներ,— գրում է Բալաձորին,— և նշանակում էր նրանց՝ յուրաքանչյուրին առանձին մարզերի վրա շահական իրավունք շնորհելով։ Դրանցից էին Լեռների խաքանը, այսինքն Սերիրի (գահի) տիրակալը՝ Վահրարզանշահ տիտղոսով, Գիլանի թագավորը, ինքը՝ Գիլանշահը, Տաբարսարան շահը և ալ-Լակզերի թագավորը՝ Ջուրջանշահ տիտղոսով, մասքաթների թագավորը, որի թագավորությունն այժմ գոյություն չունի և Լիրանի թագավորը՝ Լիրանշահ տիտղոսով և Շիրվանշահ կոչվող Շիրվանի թագավորը»[6]։ Բացի այս ամենից, նա նաև այդ վայրերը բնակեցնում է զանազան ժողովուրդներով, ինչպես գա երևում է Մասուդիի հաղորդումներից։ Վերջինս գրում է, որ պաշտպանական կառուցումների ավարտից հետո Խոսրով I Անուշիրվանը բնակեցնում է ժողովուրդների իրենց թագավորներով, նրանցից յուրաքանչյուրին բարձր աստիճաններ ու տիտղոսներ շնորհում ու սահմաններ անցկացնում[7]։

Արաբ պատմիչները, շեշտելով, որ արյաց արքաներն իրենց համար հուսալի մարդկանցով են բնակեցրել այդ սահմանային մասերը, ընդգծում են նաև նման միջոցառումների հիմնական նպատակը։ Ըստ Կուգամայի, նշված վայրերում բնակեցվել են Խոսրովի բանակի «սիյասիջիներ» (մի այլ տար-

---

3 Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе, Баку, 1927. с. 6 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Հ. Ս.)։ Բ. Խալաթյանցն ընդգծված մասը թարգմանում է այսպես. «Կավատը... շինեց... Կաբալայ խազարների դեմ» («Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 17)։ Մեզ համար հավանական են թվում այս թարգմանությունները, քանի որ Կավատի ձեռնարկումները (որոնք, ի դեպ, ոչ թե իրոք քաղաքների կառուցման նպատակ էին հետապնդում, ինչպես գրում են արաբ մատենագիրները, այլ՝ վերակառուցումների) ուղղված էին հյուսիսային ցեղերի արշավանքների դեմ և սրանք արտահայտում են հենց այն, ինչ եղել է Կավատի նպատակը։

4 СМОМПК, вып. 31, Тифлис, 1902, с. 15; вып. 32, Тифлис, 1903, с. 15.

5 Баладзори, с. 6; СМОМПК, вып. 31, с. 17; вып. 32, с. 15.

6 Баладзори, с. 7.

7 СМОМПК, вып. 38, Тифлис, 1908, с. 41.

բնրակում «սիյասիկիներ»[8]) կոչվող ջոկատները[9], իսկ Ալ-Իսթախրին, որն ավելի մանրամասն է խոսում այս մասին, նշում է. «Այս վայրերը բնակեցվեցին տարբեր մարզերից գաղթեցրած, նրանց («Խոսրովների»—Հ. Ս.) կարծիքով պաշտպանության համար հուսալի վերաբնակիչներով և ողջ բնակեցված վայրերը, որոնց տիրում էին նրանք, թողնվում էր նրանց բացարձակ օգտագործմանը, առանց պետության համար որևէ ծախսերի, առանց այս կողմերի նըկատմամբ հոգսերի և առանց միջամտության նրանց գործերին. այս ամենն արվում էր այն ուժեղ ցանկությունից, որպեսզի այդ մասը բնակեցվէր հուսալի մարդկանցով և դրանով իսկ պաշտպանվեր զանազան թշնամական թուրք և «քյաֆիր» ցեղերից։ Այստեղ սահմանի պաշտպանության համար բնակեցվածների թվում էին Տաբարսարան ցեղը, իսկ վերջիններիս հետ հարևանությամբ՝ Ֆիլան և Լակզ անուններով հայտնի ցեղերը. հատկապես վերջինները բազմամարդ են և քաջ։ Բացի այդ, այնտեղ կան Լիրան, Շարվան և այլ ցեղեր։ Յուրաքանչյուր ցեղի համար կարգվում էր բնակության հատուկ վայր, որը նրանք պարտավոր էին պաշտպանել։ Նրանք բազմաթիվ են և ուժեղ և ունեն ինչպես հեծյալ, այնպես էլ հետևակ [բանակ]»[10]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, VI դ. ստեղծված քաղաքական պայմանների թելադրանքով, պարսից արքաների և հատկապես Խոսրով I Անուշիրվանի միջոցառումների հետևանքով, Աղվանից մարզպանության ընդհանուր տարածքը կազմող առանձին մարզեր վերածվում են ինքնուրույն իշխանությունների՝ իրենց թագավորի կամ իշխանի գլխավորությամբ ու ներքին ինքնավարությամբ։ Դրա շնորհիվ ժամանակի ընթացքում այդ իշխանություններն այնքան են ամրապնդվում, որ հետագայում արաբներն Անդրկովկասի այս շրջանները նվաճելու ժամանակ հարկադրված են լինում հարկերն առանձին-առանձին վճարելու պայմանով հաշտության պայմանագիր կնքել Շաքիի և Կամիբերանի տերերի, Խայզանի ու Շիրվանի, ինչպես նաև մյուս թագավորների հետ[11]։ Ավելի ուշ արաբ զորավար Մասլամայի հետ առանձին հաշտություն կնքելու նպատակով նրան են ներկայանում Շիրվանշահը, Լիրանշահը, Տաբարսարանշահը, Ֆիլանշահը, Ջուրջանշահը և Մասքթաց տիրակալը[12]։ Վարչական այս նոր միավորները, որոնք, ինչպես տեսնում ենք, արդեն հանդես են գալիս տեղական իշխանական տների, տվյալ աշխարհագրական վայրի ու ցեղերի անուններով (Ֆիլան, Լակզ, Լիրան, Շիրվան, Տաբարսարան և այլն), ոչ միայն աստիճանաբար դադարում են կրել «Աղվանք» մինչ այդ իրենց համար ընդհանուր աշխարհագրական անունը, այլև սկսում են միմյանցից անկախ հյուսել իրենց պատմությունը։ Այսպիսի պայմաններում արդեն «Աղվանք» հասկացությունը տարածքային առումով սկսում է վերջնականապես գործածելի դառնալ միայն Աղվանից ընդարձակ մարզպանությունը կազմող հարավային մարզերի՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածության համար, այլ խոսքով, հայկական Արցախ և Ուտիք նահանգների համար[13], որոնք

---

8 СМОМПК, вып. 32, с. 23.

9 *Նույն տեղում, էջ 31։*

10 *Նույն տեղում,* вып. 29, с. 15.

11 Баладзори, с. 14.

12 *Նույն տեղում, էջ 17։*

13 *Տե՛ս նաև Բ. Ա. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 7, էջ 54), նույնի, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 39։*

դեռևս 461 թ., Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ, միացվել էին «բուն Աղվանքին» և նրա հետ կազմելով մեկ վարչական-հարկային միավոր, կրում էին նույն «Աղվանք» աշխարհագրական անունը։ Այժմ, երբ Աղվանից մարզպանության նախկին տարածքը տրոհվում է առանձին ինքնուրույն իշխանությունների, Արցախ և Ուտիք նահանգները ևս իրենց հայ բնակչությամբ կազմում են մի առանձին ինքնուրույն իշխանություն՝ Առանշահիկների իշխանությունը, սակայն պահպանում են արդեն տարածում ստացած «Աղվանք» անունը, որով և հանդես էին գալիս պատմության մեջ՝ Աղվանից մարզպանության կազմավորումից սկսած[14]։ «Աղվանից» կոչվող երկրի մասին հայ պատմիչների տեղեկությունները հիմնականում վերաբերում են այս երկրամասին, ավելի ուշ՝ XVIII դ., մեր պատմագիտության մեջ տեղի տալով «Աղվանք հայոց» նոր տերմինի առաջացմանը[15]։

Եվ հենց այս նորաստեղծ իշխանության սահմաններում էլ VI դ. վերջերին պարսից վերոհիշյալ քաղաքականության հետևանքով բարձրանում է մի նոր հարստություն՝ Միհրանյան հարստությունը, որը կոչված էր նշանակալից դեր խաղալու նշված երկրամասի (որն այսուհետև անվանելու ենք «Աղվանք») քաղաքական ու տնտեսական կյանքում։

Միհրանյան տոհմն Աղվանքում պատմական ասպարեզ է իջնում միայն VI դ. վերջերին, սակայն դա չի խանգարում, որ արդեն VII դ. սկզբներին դառնա տեղի իշխանական այն տոհմը, որը մինչև 821 թ. իրեն վերապահի Աղվանից «առաջին իշխան» տիտղոսը կրելու իրավունքը[16]։

Միհրանյանների՝ Աղվանքում իշխանական գահին տիրանալու և նրանց ծավալած քաղաքական ու տնտեսական գործունեության մասին միակ տեղեկատու աղբյուրը Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունն» է, որի Բ գրքի հիսուներկու գլուխներից քսանինը (ԺԷ—ԽԵ) հատկացված է ուսումնասիրվող տոհմի պատմությանը։ Նշված գլուխներից էլ, սակայն, միայն Բ գրքի ԺԷ գլուխն է պարունակում Միհրանյան տոհմի նախնական պատմությունը՝ տոհմի հիմնադիր Միհրանից մինչև Աղվանից մեծ իշխան Ջիվանշիրը։ Այս գլուխն է, որ մեզ տանում է Աղվանից երկրի պատմության VI դ. վերջին տասնամյակը, երբ սոցիալական ու քաղաքական փոփոխությունները նպաստում են նոր տոհմի բարձրացմանը և այստեղ է, որ պատմիչը շարադրում է Ջիվանշիրի նախնիների ծագման և Աղվանքում տիրապետության հասնելու պատմությունը։

Ըստ այդ գլխի, Միհրանյան տոհմը սերում է պարսից թագավորների զարմից և Աղվանքում հաստատվում այսպես. պարսից Որմիզդ թագավորի

---

14 «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 213։

15 «Աղուանից աշխարհ, կրկին, առմամբ յիշատակի սա ի գիրս մեր մի՝ փոխանակ այնր աշխարհի, որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ կամ Շիրուան Երկրորդ ի մասնաւորի փոխանակ այնր մասին Հայաստանի՝ որ պարունակէ յինքեան ղերիս աշխարհս. այսինքն զՈւտի, զԱրցախ և զՓայտակարան, և գմասն ինչ յայն կոյս Կուր գետոյ. և սա կոչի յատկապես՝ Աղուանք հայոց» («Պատմութիւն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև դամ տեառն 1784, յօրինեալ ի՝ հայր Միքայել վարդապետէ Չամչեանց», հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 131)։

16 Ըստ Բ. Ուլուբարյանի, Միհրանյանների տիրապետությունը գոյատևել է սոսկ մեկ դար և այն էլ «Գարդմանքի և հարակից հայկական գավառների վրա» (Բ. Ա. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 62)։

(578—590) սպանությունից ու Վահրամ Չուբինի խռովության ճնշումից հետո, նորընծա արյաց արքան՝ Որմիզդի անչափահաս որդի Խոսրով II Փարվեզը (590—628), դրությունը երկրի ներսում ամրապնդելու և հորը սպանողներից վրեժխնդիր լինելու նպատակով, կոտորում է դավադրության մասնակիցներ ու պարագլուխներ իր Բնդո և Վստամ քեռիներին ու սրանց ազգականներից վաթսուն հոգու[17]։ Այդ սպանդի ժամանակ Խոսրովի ու նրա քեռիների ընդհանուր ազգակիցը, Միհրան անունով, իբր արքայի վրեժխնդրությունից խուսափելու համար, մոտ երեսուն հազար ընտանիքով հեռանում է Պարսկաստանից, ցույց տալով, թե մտադիր է անցնել Խոսրովին թշնամի խազարների մոտ։ Դա, ըստ Մ. Կաղանկատվացու, լուրջ մտահոգություն է պատճառում Խոսրովին. նա շտապում է Միհրանին կանխել և մի դրությամբ նրան իրավունք տալ ընտրելու իր համար բնակության վայր որտեղ կամենա, եթե չի ցանկանում ապրել բուն Պարսկաստանում[18]։ Միհրանը, որ այդ ժամանակ հասած է լինում «Յուտի գաւառ մերձ ի քաղաքն մեծ Պարտաւ... և ի գալ հրովարտակին պատահի նմա ի սարոտն գաւառին Գարդմանայ... տեսեալ զբարեխառնութիւն աշխարհին՝ հաճեցաւ ի նմա լինել բնաբար. և շինեաց յիւր անուն քաղաք մի՝ կոչելով զնա Միրհաւանն»[19]։ Հաստատվելով նոր վայրում, Միհրանն այնուհետև իր մոտ է հրավիրում դավառի նշանավոր մարդկանցից տասներկու հոգու, դավով սպանում նրանց և դառնում գավառի տերը։ Միհրանին հաջորդում են որդիները՝ «Արմայէլ որ ծնաւ զՎարդ, Վարդ ծնաւ զքաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»[20]։ Այս Վարդանն ըստ երևույթին ավելի հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում, քանի որ սկսել էր բերդ կառուցել Գարդմանում։ Նրան, հավանաբար, այլևս չէր բավարարում սոսկ Գարդմանի տեր լինելը։ Եվ չնայած տեղական իշխանական տների հետ ունեցած խնամիական կապերին (Զարմիհր Եռանշահիկը փեսայացել էր Միհրանյաններին), Վարդանը ողջ Աղվանքին տիրապետելու համար դիմում է խարդավանքի և «ի նենգելն ի սիրտ իւր զնախնական ազգս Հայկազնեայց զԵռանշահիկս... կոչէ որպես ի ճաշ և հաց կորստեան գործեալ տայ նոցա ուտել և ի ճաշի անդ արեամբ նոցա արար գլխատումն արանց վաթսնից. միայն թողոյր ի նոցանէ գփեսայացեալ իւրում ցեղին զԱրմիրհն Եռանշահիկ։ Այսպես եղև նոցայն տիրել Աղուանից»[21]։ Պատմիչն այնուհետև շարունակում է թվարկել Վարդանից հետո եկող Միհրանյաններին. «Սորա (Վարդանին—Հ. Ս.) լինի որդի Վարդ, Վարդ ծնանի զՎարազման, զՇուշիկ տիկին և զՎարազ Գրիգոր՝ զառաջին իշխանն Աղուանից, որ էառ զմկրտութիւն ի Վիրոյէ Աղուանից կաթուղիկոսէ։

---

17 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 195։

18 Սեբեոսը, որ մանրամասն խոսում է պարսից աշխարհում տեղի ունեցած այս երկպառակության ու գահակալական կռիվներում Բնդո ու Վստամ եղբայրների դերի, Խոսրով արքայորդու՝ Մորիկի մոտ ապաստան գտնելու ու վերջում սրա վրեժխնդրության մասին, և որը այս պատմության համար հավանաբար Կաղանկատվացու աղբյուրն է («The history of the Caucasian Albanians by Movses Dasxuranci", translated by C. Y. F. Dousett, London, 1961, p. 107, n 1, Հ. Ս. Ասլանյան, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 203), ոչինչ չի հաղորդում Միհրանի հետ կապված այս միջադեպի մասին։

19 Մ. Կաղանկատվացի, էջ 195—196։

20 Նույն տեղում, էջ 196։

21 Նույն տեղում, էջ 196—197։

Վարազ Գրիգորի լինի որդիք չորք՝ Վարազ Փերոժ, Ջիւանշիր, Յեզուտ Խոսրով և Վարազման»[22]։

Միհրանյան տոհմի այս ծագումնաբանական պատմությունը պատմագիտության մեջ բավական կասկածների տեղիք է տվել։ Այդ տեղեկության մեջ առաջին անգամ անհամապատասխանություն է գտել Մ. Բրոսսեն[23], որին կրկնել է Ք. Պատկանյանը[24]։ Խնդրառու հարցը բարձրացրել է նաև Հ. Մանանդյանը՝ Մ. Կաղանկատվացուն նվիրված գերմաներեն ուսումնասիրության մեջ, որի նպատակը Մ. Կաղանկատվացու ապրած ժամանակաշրջանի ճշտումն է եղել[25]։ Ապացուցելու համար, որ Մ. Կաղանկատվացին X դ. հեղինակ է և ոչ թե VII, Հ. Մանանդյանը որպես կռվան բերում է հենց Միհրանյան տոհմի ծագումնաբանական այս պատմությունը։ Նա գրում է. «Արդեն տարօրինակ է, նույնիսկ պատմականորեն անհնարին, որ այս վեց սերունդները Միհրանից՝ Խոսրով Փարվեզի (590—628) ազգականից սկսած մինչև Ջիվանշիր իշխանը (իշխել է ըստ մեր հեղինակի 637 թվականից), մի քանի տասնամյակում են իշխել»[26]։ Այլ խոսքով, գիտնականը կասկածի տակ է առել այս հատվածի պատմականությունը։

Այնուհետև Հ. Մանանդյանի վերոհիշյալ կարծիքը կրկնել են Ն. Ադոնցը[27], Ն. Ակինյանը[28], Կ. Տրեվերը[29], Ջ. Դոուսեթը[30] և Կ. Թումանովը[31]։

Համաձայն նրանց միահամուռ կարծիքի, Միհրանից մինչև Ջիվանշիրն իշխել են վեց սերունդ, որոնք չեն տեղավորվում Կաղանկատվացու ցույց արված ժամանակահատվածում։ Հետևաբար, եզրակացնում են նրանք, Միհրանյանների գալու թվականի մասին Մ. Կաղանկատվացու տեղեկությունը կա՞մ կարոտ է ճշգրտման, կամ էլ, եթե այն հավաստի է, պետք է Միհրանյանների Աղվանք գալը ետ տանել որոշ ժամանակով[32]։ Այսպիսի առաջարկություն ա-

---

22 Նույն տեղում, էջ 197։

23 «История агван Моисея Каганкатваци, писателя X века», пер. К. Патканова, СПб., 1861, с. 341.

24 Նույն տեղում։

25 A. Manandian, Beitrage zur albanischen Geschichte, Leipzig, 1897.

26 Նույն տեղում, էջ 13։

27 Ն. Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու («Անահիտ», 1939, № 6, էջ 4)։

28 Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմություն Աղվանից, Վիեննա, 1970, էջ 66։

29 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании VI в. до н. э.—VII в. н. э., М.—Л., 1959, с. 236.

30 C. Y. F. Dousett, Նշվ. աշխ., էջ 107, ծան. 3.

31 Cyril Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 478—479.

32 К. В. Тревер, Նշվ. աշխ., էջ 236, Ն. Ակինյան, Նշվ. աշխ., էջ 37, Cyril Toumanoff, Նշվ. աշխ., էջ 478։ Վերջինս Միհրանյան տոհմի համար կազմել է մի նոր ժամանակագրություն՝ Միհրանից մինչև Վարազ—Գրիգորը իշխած յուրաքանչյուր իշխանի համար սահմանելով գահակալության 30 տարի (նույն տեղում, էջ 479, ծան. 178)։ Կ. Թումանովի հետևությամբ նմանօրինակ առաջարկություն է անում նաև Ջ. Բունիյաթովը, բայց առանց Կ. Թումանովին նշելու («Известия» АН Азерб. ССР, 1964, № 4, с. 90, пр. 27)։ Կարծիք է եղել, որ Միհրանյանների գալը պետք է ավելի ետ տանել (Играр Алиев, Ф. Л. Османов, Бассейн рек Геокчай—Гирдманчай—Ахсучай в античное время («Советская археология», 1975, № 1, с. 201, пр. 34).

ելիս նրանք հենվում են Մ. Կաղանկատվացու Ա գրքի ԻԶ գլխի այն տեղեկության վրա, ըստ որի, իբր Միհրանյան Վարդանը մասնակցել է 488 թ. Աղվանքում Վաչագան Բարեպաշտի գումարած եկեղեցական ժողովին։ Սակայն պատմագիտության մեջ արդեն ցույց է տրվել նման կարծիքի սխալ լինելը, կարծիք, որն առաջացել էր տարբեր ժամանակներում ապրող և միևնույն անունը կրող անձնավորություններին թյուրիմացաբար նույնացնելուց[33]։ Այս հանգամանքը թույլ չի տալիս Միհրանյանների Աղվանք գալը ժամանակով ետ տանել և Մ. Կաղանկատվացուն էլ մեղադրել ժամանակագրությունը խախտելու մեջ։

Պատմագիտության մեջ հայտնվել է նաև նախորդներին հակառակ մի կարծիք ևս, որով հռոմեական կայսրության II—III դդ. և Արշակունյաց Հայաստանի բաժանումից մինչև անկումն ընկած ժամանակահատվածի պատմությունից բերվող օրինակներով փորձ է արվել ապացուցելու Մ. Կաղանկատվացու ճշմարտացիությունը՝ Միհրանյան վեց սերունդներ ընդգրկող ժամանակաշրջանի հարցում[34]։

Միհրանյան տոհմի վեց սերունդները՝ Միհրանից մինչև Վարազ-Գրիգորը ներառյալ, ըստ պատմիչի, իշխել են 590 թ. (Խոսրով II Փարվեզի գահակալումից ու Միհրանի կարծեցյալ փախուստից) մինչև Աղվանից մեծ իշխան Ջիվանշիրը, որը, ինչպես կարծել են ուսումնասիրողները, իշխել է 636 թ., բայց իրականում 642 թ.[35], այսինքն 46—47 (թեկուզ 50—52) տարվա մի ժամանակամիջոցում, որը, իրոք, քիչ է, եթե որդին հաջորդել է հորը։ Բանն այն է, որ որդին հորը հաջորդելու ենթադրության հնարավորություն տալիս է նաև պատմիչն իր հաղորդումներով, և ուսումնասիրողները հարցին մոտենալով հենց այդպես, առաջին հայացքից բխող պարզ պատկերացումով, առաջ են քաշել զանազան տարբերակներ, փորձելով լուծել առաջացած անհամապատասխանությունը։ Սակայն կա մի շատ կարևոր հանգամանք, որը խորհելու առիթ է տալիս և որին ուշադրություն չեն դարձրել ուսումնասիրողները, բայց և որը վճռական նշանակություն ունի հարցի պարզաբանման համար։ Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն» երկում Միհրանյան տոհմից Վարազ-Տրդատ III-ի մասին ասվում է, որ «այս Վարազ-Տրդատ ի Միրհական տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնլով»[36]։ Սակայն պատմիչի այսպիսի վճռական ու առարկություն չընդունող հաղորդումը հերքվում է իր իսկ այլ տեղեկություններով։

Ըստ «Պատմության», Միհրանյան տոհմի ամենանշանավոր ներկայացուցչի՝ Ջիվանշիրի, սպանությունից հետո (683) Աղվանից իշխանական գահն անցնում է նրա եղբորորդուն՝ Վարազ-Տրդատին. «տեարք տոհմից, կուսակալք, մեծամեծք, նախարարք և ամենայն իշխանք աշխարհացն այնոցիկ ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսն Եղիազար՝... հաճեցան առժամայն ընտրել հաւանութեամբ զնախարար ոմն, որ մեծարեալ էր կայսերակերպ պատուով զապեհի պատրկութեան ստացեալ պատիւ, որոյ անուն Վարազ Տրդատ, որդի

33 Ս. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 269)։

34 Ս. Կ., Աղուանքի պատմություն («Արարատ», 1899, էջ 119)։

35 Հ. Ս. Սվազյան, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվի հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 11, էջ 110)։

36 Մ. Կաղանկատվացի, էջ 375։

Վարազ Պերոժի՝ եղբօր Ջիւանշիրի»[37]։ Եվ սա՝ Վարազ-Տրդատը. Աղվանից առաջին իշխան է նշանակվել այն դեպքում, երբ ինքը՝ Ջիվանշիրը, ուներ բյուզանդական Կոստանդ II կայսեր կողմից պատրիկության տիտղոս ստացած որդիներ[38]։ Անմիջական ժառանգ չէր նաև կրկին Ջիվանշիր անունով մի ուրիշ «մեծ իշխան», վերը հիշատակված Վարազ-Տրդատ III-ը՝ Ստեփանոսի որդին, և այլն։ Ուրեմն, Միհրանյան տոհմում միշտ չէ, որ իշխանությունն անցնում էր իշխանի անմիջական ժառանգին, չնայած պատմիչի «որդի ի հօրէ առնլով» տեղեկությանը։ Ի միջի այլոց, Միհրանյան տոհմում անմիջական ժառանգականության կարգն էլ խստորեն չի պահպանվել. հաճախ իշխանությունն անցել է ոչ թե ավագ որդուն, այլ կրտսերին։ Իրենց հայրերի կրտսեր որդիներն էին «զՎարազ Գրիգոր զառաջին իշխանն Աղուանից»[39] և վերջինիս «զերկրորդ որդին... Ջիւանշիր խրոխտ և սիգողաճեմ»[40]։ Մ. Կաղանկատվացու երկում եղած ժամանակագրական անհամապատասխանությունն առաջացել է պարզապես այն պատճառով, որ պատմիչը խոսելով Ջիվանշիրի նախնիների և իր համար հեռավոր ժամանակների մասին, սոսկ նրանց հաջորդականությունը թվարկելուց բացի ավելին չի կարողացել անել, մանավանդ որ նրանցից Միհրի, Արմայելի և Վարդի գործունեությունն էլ սահմանափակված է եղել Գարդման գավառի շրջանակներում։ Այդպիսի թվարկումը՝ առանց ժառանգորդի ազգակցական կապը նախորդի հետ նշելու, այնպիսի տպավորություն է ստեղծել, թե որդին հաջորդել է հորը։ Այսպիսով, Միհրանյան իշխանների՝ Աղվանքում վերջնականապես հաստատվելու այս կարճատև ժամանակամիջոցում հաջորդականությունը պետք է դիտել ոչ թե հորից որդուն անմիջականորեն փոխանցվելու կարգով, որի ժամանակ Մ. Կաղանկատվացու նշած ժամանակամիջոցը իրոք չէր բավականացնի, այլ նույն տոհմի տարբեր ժառանգների միմյանց հաջորդելու օրինաչափությամբ։ Հարցին մոտենալով այս տեսանկյունով, Միհրանյան իշխանների այսպիսի արագ հաջորդականությունը դառնում է տրամաբանական և քաղաքական հանգամանքներով պատճառաբանված։ Միհրանյաններն Աղվանք էին եկել նվաճման նպատակով և տեղական Առանշահիկ իշխանների դարերով սրբագործված իրավունքի հաշվին էին ուզում իշխանություն ձեռք բերել, որը և, բնականաբար, հանգեցնում էր նրանց դիմադրությանը։ Առանշահիկները, ամենայն հավանականությամբ, բոլոր միջոցներով ջանացել են վերացնել իրենց գահի հավակնորդ Միհրանյաններին։ Վերջիններս էլ իրենց հերթին միջոցների մեջ խտրություն չեն դրել Առանշահիկների նկատմամբ գերիշխանության հասնելու համար։ Հիշենք Միհրանի և նրա ծոռ Վարդանի կազմակերպած դավադիր խնջույքները, խնամիական կապերի հաստատումը Առանշահիկների հետ և այլն[41]։ Նրանք կենաց ու մահու գոտեմարտի բռնվեցին, որի ժամանակ, բնականաբար, գահակալների հաջորդականությունն արագանալու էր։ Այդ է պատճառը նաև, որ ինքը՝ պատմիչն էլ չի խոսում այս տոհմի վեց ներկայացուցիչների մասին, այլ միայն

---

37 Նույն տեղում, էջ 261—262։

38 Նույն տեղում, էջ 212։

39 Նույն տեղում, էջ 197։

40 Նույն տեղում, էջ 198։

41 Առանշահիկների ու Միհրանյանների այս հակամարտությունը խուլ կերպով շարունակվում էր նաև հետագայում և հանգեցրեց Ջիվանշիր մեծ իշխանի սպանությանը (Մ. Կաղանկատվացի, էջ 255—256)։

թվարկում է նրանց։ Ամբողջ վեց սերունդներից նա միայն երկուսի՝ Միհրանի ու Վարդանի գործունեության և քիչ թե շատ տևական կյանքով ապրելու մասին է խոսում։ Առաջինի, որ եկավ Աղվանք և սպանեց տասներկու նշանավոր իշխանների, ու երկրորդի, որ նաև բերդ կառուցեց երեք տարում և նմանվեց իր նախապապին՝ «հաց կորստեան» տալու գործում։

Միհրանյանների Պարսկաստանից գալու այս պատմությունը Ն. Ակինյանին հանգեցրել է այնպիսի եզրակացության, թե աշխատության «խմբագիրը ձգտում կցուցնե Աղուանից ինչպես թագավորները, նույնպես իշխանները Արշակունի և Սասանյան ծագումէ սերած հավատացնել»[42]։ Բայց ճիշտ չէ այս պատմության մեջ տեսնել հեղինակի ինչ որ ցանկություններ և չտեսնել Պարսկաստանի՝ դարեր շարունակ տևող զավթողական քաղաքականությունը, որ նա վարում էր Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում։ Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, Անդրկովկասում վերջնականապես հաստատվելու նրա համառ ձգտումը բավականին պերճախոս են վերը նշված միտքը հաստատելու համար։ Աղվանքում Միհրանյան տոհմի հաստատվելը ևս Պարսկաստանի նույն քաղաքականության շարունակությունն էր և ուներ իր պատճառները։ Պարսկաստանի սահմանները IV—V դդ. գնալով ընդարձակվում էին և ավելի ու ավելի էին մոտենում կովկասյան քոչվոր ցեղերով բնակեցված տարածություններին և ավելի շատ ու շուտ-շուտ էին ենթակա դառնում քոչվորների հարձակումներին։ Նրանց ճանապարհը փակելու և իրենց հյուսիսային սահմանները պաշտպանելու համար Սասանյանները, ինչպես արդեն վերևում տեսանք, դիմում էին ամենաբազմազան քայլերի, չխնայելով ոչ նյութական և ոչ էլ մարդկային միջոցներ։

Ընդհանրապես Անդրկովկասում ամուր տիրապետություն ունենալու քաղաքականությունը վաղուց էր որդեգրված Տիզբոնի կողմից և չէր թուլացել նաև Խոսրով II Փարվեզի օրոք, եթե ավելի չէր ուժեղացել, մանավանդ, երբ 591 թ. Հայաստանը կրկին բաժանվել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Ստեղծված պայմաններում այլևս նպատակահարմար չէր նվաճված երկրները կառավարել սոսկ մարզպանների միջոցով։ Անհրաժեշտ էր ուժեղացնել տվյալ դեպքում պարսկական տարրը և հատկապես Աղվանքի Գարդման գավառում, որն էլ, իր հերթին, պատահական չէր ընտրված։ Հայաստանի և Վրաստանի երկրորդ բաժանումից հետո Գարդմանը ձեռք է բերում շատ կարևոր ստրատեգիական դիրք։ Գարդմանի տիրակալների առջև ծանր ու պատասխանատու խնդիր էր ծառացել՝ պահպանել Սասանյան ինքնակալության արևմտյան սահմանները նաև Բյուզանդիայի հնարավոր ներխուժումներից։

Այսպիսի պայմաններում Խոսրով II Փարվեզը հույս չէր կարող ունենալ տեղական իշխանների վրա, չնայած այնտեղ նստած էր պարսից մարզպանը։ Պետք էր ավելի ռեալ ուժ՝ կրոնով ու գաղափարով հավատարիմ Պարսկաստանին, նրա զավթողական քաղաքականությանը։ Եվ նա գտավ այդ ուժը, որը թե՛ կրոնով, և թե՛ գաղափարով հավատարիմ լինելով Պարսկաստանի զավթողական քաղաքականությանը, պետք է իրականացներ այն խնդիրը, որ իրենց առջև դրել էին Սասանյանները։

Հաստատվելով Գարդմանում և նրա նախարարական տան ներկայացուցիչների մեծ մասին կոտորելով, Միհրանյանները փոխարինելու եկան Գարդ-

---

12 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 66։

մանի նախարարական նախկին տանը։ Թվում էր, թե նրանց հաստատվելով ու Գարդմանի նախկին հայ նախարարական տան վերացումով կամ ժամանակավորապես քաղաքական կյանքից հեռացումով ողջ դավառը նոր հարստության ազդեցության տակ կկորցնի իր հայկականությունը։ Բայց տեղի ունեցավ հակառակը. Միհրանյաններն աստիճանաբար հայանում են՝ ընդունելով քրիստոնեություն։ Մ. Կաղանկատվացին գրում է. «Եւ Միրհեանն, որ ի Սասանեան տոհմէ էր եկեալ ի Պարսից՝ հաստատեցաւ ի նախարարութեան. և անուանք նոցա որդի ի հօրէ առնլով. են այսոքիկ՝ Միհր. Արմայէլ, Վարդ, քաջ Վարդան, որ ճաւատացեալ ի Քրիստոս, և ոչ շինողն Գարդման բերդոյ...»[43]։ Ընդունելով քրիստոնեություն և ապա խնամիական կապեր հաստատելով տեղական հայ իշխանական տների ներկայացուցիչների հետ, մանավանդ հայ գրի ու գրականության առկայության պայմաններում[44], Միհրանյանները վերջնականապես հայանում են և սկսում հանդես գալ որպես հայկականության ջատագովներ՝ յուրացնելով հայկական ավանդույթները։

Սկզբնական շրջանում Միհրանյաններն ամփոփված էին Գարդման դավառում, բայց և առաջին իսկ հնարավորության դեպքում նրանք կարողանալով գերիշխանության հասնել գլխավոր հակառակորդների՝ Առանշահիների նկատմամբ, իրենց հոչակում են Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածության վրա իշխելու հավակնություն ունեցող միակ իրավատերերը։ Միհրանի ժառանգները, լինելով շրջահայաց ու հեռատես քաղաքական գործիչներ, ժամանակի ընթացքում ոչ միայն կարողանում են իրենց տիրապետությունը տարածել Կուրի և Արաքսի միջագետքյան տարածքում, այլև այն տարածել Կուրի ձախակողմյան տարածքի որոշ մասի վրա[45]։ Բայց և հարկ է նկատել, որ այս նշված որոշ տարածությունների ենթակայությունը Միհրանյաններից կրում էր ավելի շուտ ժամանակավոր և անվանական բնույթ. նրանց քաղաքական գործունեությունը հիմնականում ծավալվում էր Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում՝ Ուտիքում և Արցախում։

АГВАНК И РОД МИХРАНИДОВ

ГЕНРИК СВАЗЯН

Резюме

В VI в. Сасаниды в целях защиты своих северных границ от вторжений хазар разделили территорию Агванского марзпанства на отдельные княжества, правителями которых назначили местных владетелей с

---

43 Մ. Կաղանկատվացի, էջ 387։ Ս. Կանայանը գտնում է. որ «ոչ շինողն Գարդման բերդոյ» պետք է սրբագրել «որ շինողն Գարդման բերդոյ» («Անհայտ գավառներ հին Հայաստանի», Վաղարշապատ, 1914, էջ 160, ծան. 2)։ Այս ուղղումը շատ հավանական է. մանավանդ որ Կաղանկատվացին ունի հենց այդ հաստատող վկայություն. «զքաջն Վարդան, որ շինեաց զ-բերդն Գարդմանայ» (Մ. Կաղանկատվացի, էջ 196)։

44 Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966։

45 «Այսպէս ի սահմանացն Վրաց մինչև ի Դրունս Հոնաց միահեծան ճոխութեամբ եղեալ էր (Ջիվանշիրը—Հ. Ս.) մինչև ցգնան Երասխ» (Մ. Կաղանկատվացի, էջ 209)։

громкими титулами «царей». Образовывались новые административные единицы, которые перестали носить географическое название «Агванк». Вновь образованные политические единицы стали называться по названиям княжеских домов, географических местностей (Лакз, Лиран, Ширван и т. п.). Название же «Агванк» со временем свелось к территории, расположенной между реками Кура и Араке, т. е. к армянским областям Утик и Арцах. Здесь именно в конце VI в. утвердился новый княжеский дом Михранидов. Некоторыми исследователями генеалогия Мнхранидов, сообщаемая Каганкатваци, считается неверной, так как историк для первых представителей этого рода (6 поколений) выделяет очень короткий промежуток времени. Они исходят из того, что на агванский княжеский престол на смену князю, как правило, вступал прямой наследник и, следовательно, считают невозможным правление шести поколений за 46—47 лет (50—52). Однако, как выясняется, в этом княжеском роде власть не всегда переходила к прямому наследнику.